

ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՀԵՉՑՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական Հայաստանի Վայոց ձոր գավառի այժմյան բնակչությունը հիմնականում խոսում է խոյի բարբառով: Խոյեցի հայերը վերաբնակվել են այնտեղ, ինչպես և Հայաստանի այլ շրջաններում, պատմական ոչ հեռու անցյալում՝ շուրջ 150 տարի առաջ: Ինչպիսի՞ն է եղել, ուրեմն, Վայոց ձորի տեղաբնիկների խոսվածքը. չէ՞ որ այդ տարածքի բարենպաստ աշխարհագրական դիրքը (Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաների միջև ընկած լեռնային տիրույթը) խոսում է հայ ժողովրդի տվյալ հատվածի ասպատակումներից և բռնագաղթներից մասամբ պաշտպանվելու հնարավորության մասին: Եվ իրոք, ուսումնասիրելով այժմյան Եղեգնաձորի, Ազիզբեկովի շրջանների, Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիսային գյուղերի խոսվածքները, հեշտությամբ կարելի է առանձնացնել մի խոսվածք, որը միանգամայն տարբերվում է խոյի բարբառից: Այն կարելի է պայմանականորեն անվանել Վայոց ձորի խոսվածք, մանավանդ որ այդ խոսվածքը կրողներն իրենց անվանում են «հին հայեր»: Նրանց բնակավայրերն են՝ Եղեգնաձորի շրջանի Արենի, Աղավնաձոր, Ռինդ, Չիվա, Խաչիկ, Արփի, Գնիշիկ, Հորս, Ազիզբեկովի շրջանի Գնդեվազ, Կեչուտ և Նախիջևանի ԻՍՍՀ Ազնաբերդ և Մեծոփ գյուղերը¹:

Վայոց ձորի խոսվածքի մասին թուրքիկ հիշատակություններ կան Ա. Ղարիբյանի և Ա. Գրիգորյանի աշխատություններում², որոնցում համարվել է Արարատյան խոսվածք:

Ըստ ավանդական միահատկանիշ դասակարգման խոսվածքը պատկանում է բարբառների արևելյան խմբակցության ում Ճյուղին և ունի պայթական բաղաձայնների երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ: Հնչյունային, քերական, բառապաշարային և բառակազմական մի շարք առանձնահատկությունների կողքին Վայոց ձորի խոսվածքը դրսևորում է ընդհանուր գծեր հարևան Արարատյան, Զանգեզուրի, Նախիջևանի խոսվածքների հետ, փաստ, որը վկայում է նրա՝ նույն տարածքում վաղուց ի վեր գտնվելու մասին:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Վայոց ձորի միջնադարյան որոշ

¹ Հորսի և Մեծոփի խոսվածքը (Հորսը բնակեցված է 1919 թ. Մեծոփից գաղթած հայերով) որոշ շափով առանձնանում է լեզվական ավելի սերտ առնչություն ներկայացնող նշված մյուս գյուղերի ընդհանուր խոսվածքից: Մեծոփը կամ Օծոփը (այժմ Բաղամյու) մինչև մեր օրերը պահպանված տեղաբնիկ հայերի միակ բնակավայրն էր պատմական Ճահուկ գավառի տարածքում (այժմ այնտեղ բնակվում է մեկ հայ ընտանիք): Հավանաբար ավելի ճիշտ կլիներ Հորսի և Մեծոփի խոսվածքը առանձնացնել և անվանել Մեծոփի կամ Ճահուկի խոսվածք:

² Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1947, էջ 78: Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 205:

արձանագրություններում³ և հիշատակարաններում⁴ կարելի է գտնել խոսվածքի հետքերը: Համոզվելու համար համեմատենք այդ հիշատակություններից (XIV—XV դդ.) քաղված և Վայոց ձորի ներկա խոսվածքի մի քանի դարձվածքներ.

Հիշատակություն

Գրում ի, մուկն ցեթեց
 Շեհաուր
 Իմ ֆիրն մեռավ
 Մէր շունի, Ա. քոյր ունի, էն էլ
 մեռաւ
 Ձեռս թիւացավ
 Շապտէնն մէկ օր Մակֆառովն
 շուր ավի
 Մին կով տուի

Խոսվածք

Կըրըմ ի(մ), մուզը ցէթէց
 Շընհավօր
 Իմ ֆ'իրըս մեռավ
 Մէր շունիմ, մին ֆ'իր ունիմ, էն էլ
 մեռավ
 Մեռըս թիւացավ
 Շապտէնը մին օր Մակֆառովը
 ճուր տըվիմ
 Մին կօվ տըվիմ

Տվյալ հոդվածում նկարագրվում են Վայոց ձորի խոսվածքի հնչյունա-հնչյութային հատկանիշները նախիջևանի Ազնաբերդ գյուղի խոսվածքի նյութերի հիման վրա:

Ազնաբերդը (Հզնաբերդ, Ձնաբերդ) գտնվում է Վայքի լեռնաշղթայի հարավային ստորոտում, ունի մոտ 1200 հայ բնակիչ: Գյուղի տարածքում գտնվել են կիկլոպյան ամրոցներ, տարբեր ժամանակաշրջանների պատկանող այլ բնակավայրերի հետքեր: 1976 թ. ուսումնասիրություններ⁵ ցույց են տվել, որ պահպանված պատմական հուշարձաններից մի քանիսը կառուցված են եղել IX—X դարերում:

Ազնաբերդի խոսվածքը հոդվածագրի մայրենի խոսվածքն է, որոշ նյութեր տրամադրել են գյուղի տարեց բնակիչներ Հայրապետ Վարդանյանը, Թերուտ Սարգսյանը, Շուշան Բալասանյանը, Ռուբեն Մարտիրոսյանը, Աղասի Օհանջանյանը, Նուշիկ Մարտիրոսյանը, Ժենիկ Խաչիբաբյանը, որոնց հեղինակը հայտնում է խորին շնորհակալություն:

ՀնՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վայոց ձորի խոսվածքն ունի 42 հնչյուն:

Բաղաձայնները 33-ն են.

Ձայնեղ պայթականներ և կիսաշփականներ՝ բ, գ, գ', դ, ձ, շ.

Խուլ պայթականներ և կիսաշփականներ՝ պ, կ, կ', տ, ծ, ճ.

Շնչեղ խուլեր՝ փ, ք, ք', թ, ց, չ.

Ձայնեղ շփականներ՝ զ, ժ, ղ, վ.

Խուլ շփականներ՝ ս, շ, խ, ֆ, հ.

Ձայնորդներ՝ լ, մ, յ, ն, ո, ր:

Մնացած 9-ը ձայնավորներն են՝ ա, է, ը, ի, ու, օ, ն, ծ, ու:

Երկբարբառներ և եռաբարբառներ խոսվածքում չկան:

Գրական հայերենի հնչյուններից տարբերվում են ն, ծ, ու քմային ձայնավորները և գ', կ', ք' քմային բաղաձայնները:

³ Ղ. Ալիշան, Միսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջք 145, 167:

⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1973, էջք 39—40:

⁵ Ա. Այվազյան, նախիջևանի պատմաճարտարագիտական հուշարձանները, Եր., 1978, էջք

Օ-ն և ու-ն թույլ են քմայնացած և հանդիպում են հիմնականում նոր փոխառություններում, իսկ օ-ն ուժեղ է քմայնացած և խոսվածքում ձեռք է բերել հնչույթային արժեք: Գա երևում է իմաստային հակադրության հետևյալ գույգերից՝

- օրօ (այ տղա) — արա (արա)
- տօր (բարձր տեղ) — տար (տար)
- օշի (ձայնարկություն) — աշի (վայրի բանջար)
- լօփ (շան լակ) — լափ (բուրբուխ, լրիվ)
- հօրիլ (կազդուրվել, աշխուժանալ) — հարիլ (հարել)
- մօլօ (թունավոր տիգ) — մալա (սվադեղու գործիք)
- հօվօ (գորգ գործելու գործիք) — հավա (եղանակ)
- տօս (դաս) — տաս (տաս)

Պ, կ, ք բաղաձայնները հանդիպում են է, ի և քմային ձայնավորներից առաջ, չունեն հնչույթային արժեք:

ՇԵՇՏԸ

Խոսվածքում շեշտը վերջնիթեր է՝ պա՛զուգ < բազուկ, տա՛խծը < դաղձն, տա՛նդօ < դատարկ, առդա՛սունք < արտասուք, ո՛ղիլ < ուտել, ուրախը՝ թուն < ուրախութիւն, գ՛րբօ՛գի < կիւրակէ, հո՛ւլունք < ուլունք, աղա՛նուր < աղաղուր և այլն:

Սակայն այս օրինաչափությունից շեղվելով՝ շեշտն ընկնում է վերջնավանկի վրա հետևյալ դեպքերում.

ա) Նախավերջին վանկում գաղտնավանկ ունեցող բառերում՝ տրմա՛գ < դմակ, կրծի՛գ < կծիկ, փրոփ՛լ < փռել, թրթրոա՛լ < թրթռել, ըստէ՛ղ < այստեղ և այլն.

բ) Պատճառական բայերում՝ արբացնի՛լ < ապրեցուցանել, փրկացնի՛լ < փրկեցուցանել, լացացնի՛լ < լացացուցանել և այլն.

գ) Նի վերջավորութեամբ հոգնակի ձևերում՝ ասէղ-ասէղնի՛, շէրէփ-շէրէփնի՛, վօննաման-վօննամաննի՛, կրջուց-կրջուցնի՛, ճիթօղ-ճիթօղնի՛ և այլն.

դ) Սահմանափակ թվով այլ բառերում՝ անշի՛ < առաջին, կօթնո՛ւգ < գորտ(նուկ), տա՛րվէ՛ր < դար ի վեր, յէղնո՛ւգ < աղանեակ, ըռէ՛խ < երախ և այլն:

ՀՆՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ձայնավորների հնչյունափոխությունը

Հիմնականում բոլոր դիրքերում ձայնավորների մեծ մասը մնացել է անփոփոխ.

Ազգ > ասկր, ականջ > անգաջ, պակաս > պագաս, ապա > բա, տղայ > տրղա, էշ > էշ, առնետ > առնէղ, ուգել > ուգիլ, ուլունք > հուլունք, առու > առու, իլիկ > իլիգ, մատանի > մրդանի և այլն:

Ոչ մեծ հաճախականությամբ ձայնավորները նախաշեշտ վանկերում վերածվել են ր-ի.

Աղանձել > րղանձիլ, առավոտ > րռավօղ, բաժանել > պրժանիլ, երախ > ըռէխ, երախալ > ըրէխա, գերեզման > կրէզման, դեպի > դրբա, գիշեր > քրշէր, Իսկուհի > Լսկօհի, ողողել > ըզօղիլ, ոլորել > քլօրիլ, բորբոսնել > փրփէսնիլ, ուղեղ > ըզօղ և այլն:

Փոքր հաճախականությամբ ձայնավորները, հիմնականում նախաշեշտ վանկերում, ընկել են.

Ապսպարել > պրսպարիլ, եղունգն > ղունգր, եթե > թէ, մխիթարել > մրխ-
թարիլ, կաթողիկոս > կաթղիգոս, Գաբրիել > Կափռէլ, ուղղորդ > (ը)ղոռք և
այլն:

Բոլոր դիրքերում հանդիպում են ա ձայնավորի քմայնացման դեպքեր՝
ա > օ.

Արդար > անթար, աչք > անչկր, անկեալ > անգ'ալ, ակիչ > ակ'իչ, կիրա-
կէ > գ'րնգ'ի, մխիթարել > մրխթարիլ, ժանգ > ժանգ և այլն:

Խոսվածքում մասնակիորեն գործում է Աճառյանի օրենքը, հիմնականում
դ-ով սկսվող բառերում.

Դալար > տալար, դահ > տալ, դանակ > տանակ, դառն > տանր, դաս >
տանս, դատարկ > տանդակ, դար > տար, դարձ > տանց, դարման > տարման,
դանդուռ > տանդուռ, բանջար > պանջար, ձար > ծարիգ:

Համեմատաբար քիչ է հանդիպում ա > է.

Երախայ > ըրէխա, մանգաղ > մանգ'էղ, ծագ > ծէգ, օրական > օրէգան,
փայծաղ > փիծէղ և այլն:

Բառասկզբի ե-ի դիմաց խոսվածքն ունի յ է կամ է.

Եզն > յէզր, եռ > յէռ, եղան > յէղան, երեկ > էրէգ, երկու > էրգու, եփ > էփ,
երկայն > էրգ'էն և այլն:

Մահմանափակ թվով բառերում, որոնք բարբառային հնագույն տարբերակ-
ների են⁶, բառասկզբի ե-ի դիմաց ունենք ա հնչյունը (եղբայր > ախպէր, երազ >
արազ, երկաթ > արգաթ, երկան > արգանգ, եղիճ > աղինջ):

Բառամիջում որպես կանոն ե-ին համապատասխանում է է ձայնավորը.

Երես > էրէս, աներ > անէր, տեղ > տէղ, արեգակն > րէգնագ, բերդ >
պէրք և այլն:

Ոչ հաճախ հանդիպող երևույթ է է > ի.

Կիրակէ > գ'րնգ'ի, անէծք > անիսկր, (է > ի), թեկն > թինգր, խեժ >
խիժը, ալեւոր > հալիվօր և այլն (ե > է > ի):

Արգի հայերենի նման բառասկզբում ո > վօ, իսկ բառամիջում՝ ո > օ.

Որդն > վօռքը, ոսկի > վօսկ'ի, ոչխար > վօխնար, շոր > շօր, քոր > քօր,
ձոր > ձօր և այլն:

Մահմանափակ թվով բառերում (հիմնականում ռեզայիններից առաջ) հան-
դիպում է ո > ու երևույթը.

Մոմ > մոււմ, ծոմ > ծոււմ, կոկոն > կուգում, մեռոն > մէրուն, դամոն >
տամբուլ և այլն:

Երկարբառների հնչյունափոխությունը

Այ երկարբառը հնչյունափոխվել է է ձայնավորի՝ այ > է.

Փայտ > փէղ, այժ > էձ, այդ > էդ, երկայն > էրգ'էն, կայծակ > կ'էձագ,
մայր > մէր և այլն:

Այ երկարբառը հեթարկվել է ընդհանուր-պատմական օրինաչափությանը՝
աւ > օ.

⁶ Է. Ազադան, Բարբառային հնագույն տարբերությունների հայերենում, «ՆՍՄՀ ԳԱ Հասարա-
կական գիտությունների տեղեկագիր», 1958, Պ 5, էջ 87—89:

Ատք>օթ, աւր>օր, աւձ>օց, աւրհնել>օխնիլ, աղաւթել>աղօթիլ և
այլն:

Եա երկբարբառը դարձել է է՝ եա>է.

Ծրանեակ>հրրանէֆ, սեամ>շէմֆը, կորեակ>կօրէգ, ցորեան>ցօրէն,
սեաւ>սէվ, մագեայ>մագէ և այլն:

Իւ երկբարբառը հնչյունափոխվել է ի ձայնավորի՝ իւ>ի.

Արիւն>արին, սիւն>սին, ալիւր>ալիր, ձիւն>ձին, հարիւր>հարիր և
այլն:

Հիմնականում ուրջուն ածանցով բառերում ունենք իւ>ու.

Բարձրութիւն>պանցրրբուն, զօրութիւն>զօրբուն, ուրախութիւն>
ուրախրբուն և այլն, ինչպես նաև՝ ճիւղ>նուղ, աղբիւր>ախպուր, շիւղ>շուղ
և այլն:

Ոյ երկբարբառը հիմնականում հնչյունափոխվել է ի ձայնավորի՝ ոյ>ի.

կոյս>լիս, թոյլ>թիլ, պատրոյգ>պաղրիֆ, քոյր>ֆիր, կապոյտ>կա-
բիդ և այլն:

Սահմանափակ թվով օրինակներում նույն երկբարբառը վերածվել է ու-ի՝
ոյ>ու.

Շոյտ>շուդ, կոյս>կուս, ոյժ>ուժ, բոյն>պուն:

Միայն անոջ>անօջ օրինակում ոյ-ի դիմաց ունենք օ:

Բաղաձայնների հնչյունափոխությունը

Ձայնեղ պայթակաճներ և կիսաշփակաճներ

Խոսվածքում ձայնեղ պայթակաճներն ու կիսաշփակաճները անթարկվել
են հետևյալ հնչյունափոխական օրենքներին.

Բառասկզբում, ինչպես նաև ղ կամ գ շփակաճներին հաջորդելիս՝ դարձել
են խուլեր.

Բարձ>պառց, գետ>կ'էդ, դեղին>տէղին, ձախ>ձախ, ջուր>նուր և
այլն:

Աղբիւր>ախպուր, աղջիկ>ախնիգ, դադն>տախձը, թուղբ>թուխպր,
ագբն>ասպր, ագգ>ասկը և այլն:

Բառամիջում և բառավերջում ր ձայնորդին հաջորդելիս, ձայնավորների
միջև և ետձայնավորային դիրքում (բառավերջ) վերածվել են շնչեղ խուլերի.

Ժողովուրդ>ժօզօվուրթ, երդումն>օրբումը, արդար>ւնրաւր, արբե-
նալ>հարփիլ, մարդ>մառթ, Սարգիս>Սարֆիս և այլն:

Խարել>խափիլ, արեգակն>ըրէֆնագ, դադար>թաթար, յաջող>աչօղ,
ոջիլ>վօշիլ և այլն:

էգ>էֆ, գաբ>կափը, ձագ>ձաֆ, ծագ>ծէֆ, գոգ>կօֆ և այլն:

Ինգայիններին հաջորդելիս մնացել են անփոփոխ.

Սանդ>սանդ, խնձոր>խընձօր, տանձ>տանձ, բամբակ>պամբագ,
մանգաղ>մանգ'էղ, երինջ>հէրինջ, ամթար>ամբար և այլն:

Խուլ պայթակաճներ և կիսաշփակաճներ

Բառասկզբում խուլ պայթակաճներն ու կիսաշփակաճները մնացել են ան-
փոփոխ.

կատու>կազու, պատ>պադ, ճուտ>ճուզ, ծանր>ծանդր, տանել>
տանիլ և այլն:

Բառամիջում ձայնեղանում են (բացառությու՛ն են կազմում շփականահա-
չորդ դիրքերը, որոնցում մնում են անփոփոխ)։

Շապիկ > շափիք, կուպր > կուբր, սունկն > սունգը, ապրեկ > արբիլ, ար-
ծաթ > առծաթ, պատիժք > պաղիշկը և այլն։

Աստառ > աստառ, տախտակ > տախտագ, ապսպարեկ > պրսպարիլ, աս-
տղ > աստղ, տաշտ > տաշտ և այլն։

Բառավերջում նույնպես խուլերը ձայնեղանում են.

Գործ > կօռծ, ճոճ > ճօջ, բակ > պագ, խեղճ > հէղջ, կարիճ > կարիջ,
կարճ > կառջ և այլն։

Շնչեղ խուլեր

Շնչեղ խուլ պայթականները և կիսաշփականները հիմնականում մնում են
անփոփոխ.

Փայտ > փէդ, ցորեան > ցօրէն, թաթ > քաթ, թեթև > քիթէվ, թափան >
թափան, քար > քար, շամիչ > շամիչ և այլն։

Այս օրինաչափությունը չի տարածվում շփականին հաջորդող դիրքի վրա,
ուր շնչեղ խուլերը ապաշնչեղանում են.

Քաղցր > քախժր, աղքատ > ախկաղ, աղօթք > աղօտկը, ժածք > ժաշկ և
այլն։

Չայնեղ շփականներ

Չայնեղ շփականները հիմնականում բոլոր դիրքերում նույնն են մնացել.
Վարդ > վառք, եղիճ > աղինջ, գզել > կրզիլ, զանգ > զանգ, բաժանել >
պրժանիլ, աղ > աղ, ծով > ծօվ, ոյժ > ուժ և այլն։

Պայթականների կամ կիսաշփականների նախորդելիս դարձել են խուլ
շփականներ.

Աղքատ > ախկաղ, աղշիկ > ախնիգ, ժածք > ժաշկ, ազգ > ասկը, ազբն >
ասպը, պատիժք > պաղիշկը և այլն։

Խուլ շփականներ

Խուլ շփականները բոլոր դիրքերում հիմնականում անփոփոխ են մնացել.
Սար > սար, հաստ > հաստ, միս > միս, շուն > շուն, մաշել > մաշիլ,
խելք > խէլք, գլուխ > կրլուխ, պահել > պահիլ, հայելի > հիլի, բահ > պան և
այլն։

Բայց և շփականին, ու-ից առաջ, բառասկզբում համապատասխանում է ֆ.
Հող > ֆող, հորել > ֆօրիլ, հտեկ > ֆօղիլ, հորթ > ֆօռք և այլն⁷։

Չայնորդներ

Չայնորդները հիմնականում չեն հնչյունափոխվել.

Լար > Լար, խելք > խէլք, գայլ > կ'էլ, մաղ > մագ, ծամ > ծամ, նուռն >
նուռը, անիժ > անիժ, ոուս > ըոուս, առաջ > առաշ, թառ > քառ, արև > արէվ,
գիշեր > քրշեր և այլն։

Շրթնայիններից առաջ և ձայնորդը վերածվել է մ-ի.

Անբախտ > ամբախտ, անփորձանք > ամփօղցանք, անպետք > ամպէտկը,
անմարդ > ամմառք և այլն։

Բ ձայնորդը վերածվել է ո-ի՝ ձայնավորի և բաղաձայնի միջև գտնվելիս,
բացառությամբ են կազմում մ, կ, և հնչյուններին նախորդող դիրքերը.

Մարդ > մառք, մորթել > մօռքիլ, կարդալ > կառքալ, արդար > արքար,

⁷ Մի քանի գյուղերի խոսվածքներում (Գնիշիկ, Գեղեվազ, Խաչիկ) այս երևույթը բացակա
յում է։

արտ > առդ. հմմտ. կարմիր > կարմիր, աշխարհ(ք) > ախշարհ, արմուկն > արմունգր, երկու > էրգու, երկաթ > արգաթ, զարմանալ > զարմանալ, շնորհք > շրնորհ և այլն:

ՓՈՒԱԶԳԵՑԱԿԱՆ ԵՎ ԴԻՐՔԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

Կից բաղաձայններ

Բաղաձայնների հնչյունափոխության բաժնում մասնակիորեն խոսվեց բառամիջի կից բաղաձայնների հնչյունափոխության մասին: Ընդհանրացնելով նշվածը, կարելի է ասել, որ շփականից և պայթականից կամ կիսաշփականից կազմված զույգը վերածվել է խուլ շփականից և խուլ պայթականից կամ կիսաշփականից կազմված զույգի:

Աղբ > ախպր, աղջիկ > ախնիգ, աստառ > աստառ, գաղթական > կախտագան, թուղթ > թուխպր, դժոխք > տրծոխկր, ազգ > ասկր, դաղձն > տախձր, ծաղկել > ծախկիլ, կոշտ > կոշտ և այլն:

Չնայած օրինակների սակավությանը, կարելի է ասել նաև, որ կիսաշփականից և պայթականից կազմված զույգը հնչյունափոխվում է խուլ շփականից և խուլ պայթականից կազմված զույգի:

Կոծկել > կոսկիլ, ծածկել > ծասկիլ, կծկել > կրսկիլ, մեջք > մէշկր, աչք > աշկր, անէծք > անիսկր, խոցտիկ > խոստիգ, որձկալ > օոսկալ և այլն:

Հնչյունական շղթա

Հնչյունական շղթայում նկատվում են հաջորդ բառի սկզբի բաղաձայնի ազդեցությամբ բառավերջի բաղաձայնների հնչյունափոխության մի շարք օրինաչափ երևույթներ:

Բոլոր ձայնեղները խուլերից առաջ խլանում են.

Կրբազ անիլ,	բայց՝	կրբակ տալ,
ջանրդ արբի,		ջանրտ սաղ ըլի,
նրստած աղվէս,		նրստած նանջ և այլն:

Սանդր թագիլ,	բայց՝	սանթ թագիլ,
չօրացրած անր,		չօրացրաց շիր և այլն:

Հավ էմ պահրմ,	բայց՝	հաֆ պահիլ,
աղ էմ տալի,		ախ տուր,
մաղ առնիլ,		մախ սարգօղ և այլն:

Արագ խոսելիս բոլոր կիսաշփականները, ենթարկվելով նշված օրենքին, նաև պայթում են և վերածվում համապատասխան շփականների:

ԴԱՆԴԱՂ ԽՈՍԵԼԻՍ	ԱՐԱԳ ԽՈՍԵԼԻՍ
Սատկած բաղ	սատկազ բաղ
կառթացած կիւրհ.	կառթացաս կիւրհ
բընաց քաղափ	բընաս քաղափ
նանջ փրոնիլ	նանջ փրոնիլ և այլն:

Բոլոր խուլերը ձայնեղներից առաջ ձայնեղանում են.

Իրէփ օր,	բայց՝	իրէփ դիլիմ,
մառթ ա,		մառդ ջան,
վէց օր,		վէձ դօշուն և այլն:

Պաբըս ա, բայց՝ պաբըզ Գ'րընգ'ծսն ա,
 քաֆը վէննիլ, քազ վէննիլ,
 քասը լըվացի, քազ դըլէգ'իլ և ալլն:

Արագ խոսելիս, ջ, ճ, շ կիսաշփականներից առաջ, սուլականները վերածվում են շշականների.

ԳԱՆԴԱՂ ԽՈՍԵԼԻՍ	ԱՐԱԳ ԽՈՍԵԼԻՍ
Հրէվանիզ ջամուշը	հրէվանիժ ջամուշը
կալիս շէս	կալիշ շէս
քընաց շիւ պէրի	քընաս շիւ պէրի քընաշ շիւ պէրի և ալլն:

Արագախոսութեան արդյունք է նաև կիսաշփականների շփականների վերածվելու հետաքրքրական երևույթը ձայնորդներից առաջ.

ԿԱՆԴԱՂ ԽՈՍԵԼԻՍ	ԱՐԱԳ ԽՈՍԵԼԻՍ
Ինձ նան ք'էզ	ինզ նան ք'էզ
ընդանց լավ խափիմ	ընդանս լավ խափիմ
մանջ մի կալ	մանժ մի կալ
ինչ լավ պան ա	ինշ լավ պան ա և ալլն:

Ետնապեզվայինները ձայնավորից առաջ

Գ, կ, ք ետնապեզվային բաղաձայնները բառասկզբում և բառամիջում է, ի, ւ, ծ, ծ, ու ձայնավորներից առաջ անխտիր վերածվել են իրենց քմային տարբերակներին: Այս օրինաչափութեանը ենթարկվում են ինչպես հնավանդ բառերը, այնպես էլ նոր և նորագույն փոխառությունները (կ'ինդ, կ'ինի, ք'էրիլ, գ'ծրուդ, գ'իդնիլ, ք'նուդ, ք'նիլ, մանգ'էդ, պատկ'էրք, լազ'էն և ալլն):

Այս երևույթը մասնակիորեն գործում է նաև հնչյունական շղթայում՝ է և ի ձայնավորներից առաջ.

Տըվինք տարան, բայց՝	տըվինք՝ իրանց,
ընդանք կալ դէն,	ընդանք՝ էգան,
անչ կըցիլ,	անչկ՝ ին տըրէլ և ալլն:

Հավելում

Խոսվածքում կան հնչյունի հավելման մի շարք օրինաչափ դեպքեր.

Ամուլ>ամբուլ, թմրել>տըմբըրիլ, համարել>հըմբարիլ, զմուռս>զըմբուռ (բ-ի հավելում), մանր>մանդր, ծունր>ծունդր, ծանր>ծանդր (դ-ի հավելում), ալևոր>անիլվօր, երդ>եէնք, եղի>եէղի, օրորել>ըրօրիլ (հ-ի հավելում), կանաչ>կանանչ, եղիճ>աղիճ, կամուրջ>կաւմունջ, յիշոց>ոշունց, արտասուք>առդասունք (ն-ի հավելում), պատկեր>պատկ'էրք, գարուն>կարունք, աշխարհ>աշխարք, աշուն>աշունք (հ-ի հավելում), ազգ>ասկը, բողկ>պօխկը, գաղթ>կախտը, անէժք>անիսկը (ը-ի հավելում բառավերջում), ռեհան>ընէհան, ռոճիկ>ընօջիգ, ռուս>ըռուս և ալլն (ը-ի հավելում բառասկզբում):

Կան հավելման այլ օրինակներ.

Կոկիկ>կօզիկ, պատուհան>պըղըրհան, նոր>ընօր, սպանել>սըբանիլ, ծառ>ծառը, նոթի>անօթի, նապաստակ>ալապաստուգ և ալլն:

Անկում

Անկման օրինաչափ դեպքերը հետևյալն են.

Մուկն > մուգր, կամն > կամր, նուռն > նուռր, ձեռն > ձէռր, դոխն > տօխ, կոտիմն > կօղիմ, ասեղն > ասէղ (հ-ի անկում), յաջողել > աչօղալ, յղի > ըղի, յուշապ > ուշաք, Յիսուս > Իսուս (յ-ի անկում բառասկզբում), հրախայ > բրէխա, մանանայ > մանանա, տղայ > տրղա, սատանայ > սրղանա (յ-ի անկում բառավերջում), աշխարհ > աշխարհ, շնորհք > շընօրհ, օրհնել > օխնիլ (հ-ի անկում), արջառ > աչառ, խարշել > խաշիլ, հրք > յլփ, սուրք > սուփ և այլն (բ-ի անկում):

Ձայնավորների անկման մասին խոսվեց ձայնավորների քննության մեջ:

Կան անկման այլ օրինակներ.

Պատճառավոր > պաջառավօր, ջրաղաց > ճաղաց, Գրիգոր > Կիփօր, լի-նել > ըլիլ, ջախջախել > ճրջրխիլ և այլն:

Գրափոխություն

Ականջ > անգաջ (կ/ն), բորբոս > փրփէոս (ր/բ), անալի > ըլանի (ն/լ), աղեղն > անէղ (ղ/ն), այրելիք > ըլէրիփ (ր/լ), թթխմոր > տրխտրմօր (թ/խ), դատարկ > տնողաց (տ/ր), թոնիր > քօրէն (ն/ր) և այլն:

Կրկնություն

Կրկնության դեպքերը ավելի նկատելի են բնաձայն բառերում.

Կօռալ, մրոռալ, ֆրշշալ, գրոռալ, քրշշալ և այլն:

Հանդիպում են նաև այլ օրինակներ.

Վեց > վէցց(ը), ութ > ութթ(ը), տասն > տասս(ը), հազար > հազ(զ)ար, Յիսուս > Իսուս, հրախ > ըռռէխ և այլն:

Բաղաձայնների առնմանություն

Կան բաղաձայնների առնմանության սակավաթիվ օրինակներ.

Մատնոց > մաննօց, մտնել > մրննիլ, մատնել > մաննիլ, ոտնաման > լօննաման, ուռչել > ուռոիլ, մորթ > մրլօլ և այլն:

Տարնմանություն

Տարնմանության հետևյալ օրինակները կան.

Բարձր > պանցր, շրեշ > սրէժ, ննջել > մրնջալ, բոկիկ > պօրիգ և այլն:

Մի շարք օրինակներում խ-ն դ-ից տարնմանվելով դարձել է հ.

Խաղող > հաղօղ, խաղ > հաղ, խեղճ > հէղջ, խաղաղ > հաղաղ և այլն:

Ձայնավորների ներդաշնակություն

Խոսվածքում կան առաջընթաց և ետընթաց ներդաշնակության օրինակներ.

Մարգարէ > մարգարա, աւել > էվէլ, թիկունք > քնիգ'նինփ, լեզու > լնիգնի, հայելի > հիլի, մօրուք > մնուգնիփ և այլն:

Ամփոփում

Խոսվածքում կան ամփոփման հետաքրքիր օրինակներ.

Շնորհաւոր > շընհավօր, բարի երեկո > պարնիգ'նին, ինչի համար > ինչի-մար, ընդ այս > տէսը, ընդ այդ > տէղը, ընդ այն > տէնը, ահաւասիկ > հէսիգ, ահաւաղիկ > հէղիգ, ահաւանիկ > հէնիգ, տեարընդառաջ > դառանջ, Սուրբ Հովհաննես > Սրովանէս, Սուրբ Հակոբ > Սրգագօփ, ես ինչ իմանամ > յէսիմ, ով է իմանում > օվայրմ, այգողք > այփ և այլն:

Պարզեցում և բարդացում

Պարզեցման և բարդացման օրինակները խոսվածքում համեմատաբար քիչ են.

Ձգոտալ > զրգրոյալ, ածելի > առզրլի, արծաթ > առզաթ, ծառզարդար > զրոզանթար, քանզ > քանց, գերեզման > կրէձման, հիսուն > հիծուն:

ՀԱՎԵԼՎԱՍԹ

Հնչյունափոխական երևույթների արտահայտումը մաթեմատիկական եղանակներով

Փորձենք խոսվածքի մեզ արդեն ծանոթ հնչյունափոխական երևույթները ներկայացնել մաթեմատիկական եղանակներով: Ներկայացման նման ձևը հետաքրքրական է երկու նկատառումով. նախ, որ համառոտ ձևով ներկայացվում է սովյալ հնչյունափոխությունը և երկրորդ, կարող է անհրաժեշտություն դառնալ հետազայում, երբ հայերենի բարբառագիտական ատլասի համար հավաքված մեծածավալ նյութը մշակվի հաշվողական մեթոդներով:

Կատարենք այսպիսի նշանակումներ.

Ձայնեղ պայթականների և կիսաշփականների շարքը (բազմությունը)⁸.

$$A = \{ ք, գ, դ, ձ, ջ \}$$

Խուլ պայթականների և կիսաշփականների շարքը. $B = \{ պ, կ, տ, ծ, և \}$

Շնչեղ խուլ պայթականների և կիսաշփականների շարքը. $C = \{ փ, ք, ց, շ \}$

Ձայնեղ շփականների շարքը. $D = \{ զ, ժ, ղ, վ \}$

Խուլ շփականների շարքը. $E = \{ ս, շ, խ, ֆ \}$

Ձայնորդների շարքը. $F = \{ լ, մ, յ, ն, ո, ր \}$

P տառի տակ հասկանանք բաղաձայնների բազմությունը, որը իրենից կներկայացնի հիշյալ 6 բազմությունների գումար-բազմությունը: Q տառի տակ հասկանանք ձայնավորների բազմությունը:

Յուրաքանչյուրի համապատասխան փոքրատառով (a, b, c, d, e, f, p, q) նշանակենք սովյալ բազմության տարրը, օրինակ a-ն (A-ի տարրը) ք, գ, դ, ձ, ջ հնչյուններից որևէ մեկն է, d-ն՝ (D-ի տարրը) որևէ ձայնեղ շփական:

Կօզտագործենք բարբառագիտության մեջ հայտնի > («հնչյունափոխություն»), Ø («զրո»), ինչպես նաև ձևական տրամաբանության V (տրամաբանական «կամ» շաղկապ) և ∧ (տրամաբանական «և» շաղկապ) նշանները⁹.

Օրինակի համար, Աճառյանի հայտնի օրենքը կունենա այսպիսի բանաձևավային տեսք՝

$$Ø \wedge a \wedge w > Ø \wedge b \wedge w,$$

որը կարելի է կարդալ այսպես. A բազմության յուրաքանչյուր տարր բառակզրում վեր է ածվում B բազմության համապատասխան տարրին, իսկ նրան հաջորդող w ձայնավորը՝ w-ի:

Դժվար չէ հասկանալ նաև, ասենք, ձայնեղ շփականների պայթականներին և կիսաշփականներին նախորդելու դիրքերում խլանալու երևույթը՝

$$d \wedge (a \vee b \vee c) > e \wedge b,$$

բառակզրում ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլանալու երևույթը՝

$$Ø \wedge a > Ø \wedge b$$

⁸ Գ. Բուռյան, Տրամաբանության գասընթաց, ԵՂ., 1976, էջք 416—419:

⁹ Նույն տեղում, էջք 288—294:


բառասկզբում հո հնչյունակապակցության ֆո դառնալը՝

$$\emptyset \wedge h \wedge n > \emptyset \wedge \Phi \wedge o \quad \text{և այլն:}$$

Այլ հնարավորություն կտա հնչյունափոխական երևույթների մաթեմատիկական ալգորիթմներով ներկայացնելը, քանի որ ալգորիթմն իրենից ներկայացնում է մի ամբողջական պատկեր, որը ամփոփ ձևով ցույց է տալիս տվյալ շարքի (բազմության) հնչյունների հնչյունափոխման օրինքները:

Շեղանկյուններով ցույց են տրված այն պայմանները, որոնք առաջացնում են այս կամ այն հնչյունափոխությունը, ուղղանկյուններով՝ հնչյունափոխական երևույթը, իսկ օվալներով՝ ալգորիթմների սկիզբն ու վերջը:

Դիտարկենք, օրինակի համար, խուլ պայթականների և կիսաշփականների հնչյունափոխության ալգորիթմը (գծ. 2): Ալգորիթմի սկզբից դրված է բառասկզբում գտնվելու պայմանը ($\emptyset \wedge b$), որի «այո» ելքը հանգում է Ե-ին, այսինքն՝ խուլ պայթականները և կիսաշփականները բառասկզբում մնում են անփոփոխ: Այդ նույն պայմանի «ոչ» ելքը (այսինքն բառամիջում կամ բառավեր-




Գծ. 1. Ձայնեղ պայթականների և կիսաշփականների հնչյունափոխության ալգորիթմը:

ջում գտնվելու դեպքերը) միանում է նոր՝ խուլ շփականին հաջորդելու պայմանին ($e \wedge b$), որի դրական պատասխանը հանգում է Ե-ին, իսկ բացասականը՝ Ե-ին, այսինքն շփականահաջորդ դիրքերում մնում են անփոփոխ, իսկ մնացած բոլոր դիրքերում վերածվում են համապատասխան ձայնեղների: Ալգորիթմներում \wedge նշանը փոխարինված է նույն նշանակությունն ունեցող, լատիներեն et


(«և») բառի ձևափոխությունից եկող ավելի կիրառական նշանով:

Նույն ձևով դժվար չէ հասկանալ ձայնեղ պայթականների և կիսաշփականների (գծ. 1) և շնչեղ խուլերի (գծ. 3) հնչյունափոխության ալգորիթմները:

Այս եղանակով կարելի է կազմել ցանկացած խոսվածքի հնչյունափոխական օրինաչափությունները նկարագրող համանման ալգորիթմներ:



Գծ. 2. Խուլ պայթականների և կիսաշփականների հնչյունափոխության ալգորիթմը:



Գծ. 3. Շնչեղ խուլերի հնչյունափոխության ալգորիթմը:

А. В. ВАРТАНЯН — Фонетика Вайоц-Дзорского говора. — В статье рассмотрены звуко-фонемные признаки Вайоц-дзорского говора по материалам села Азнаберд Нахичеванской АССР. Закономерности чередования представлены в приложении в виде математических формул и алгоритмов. В говоре гласные в основном не изменились. Чаще встречается палатализация гласного *ш* ($ш > ш̣$). Иногда в предударных слогах наблюдается чередование гласных на *р* или их выпадение. Все дифтонги упростились ($ш_1 > \xi$, $ш_1 > о$, $ш_1 > \xi$, $р_1 > р$, $п_1 > р$). Звонкие взрывные и полуаффрикаты в начале слов оглушились, а глухие в середине и в конце слов перешли в соответствующие звонкие. Глухие придыхательные, фрикативные и сонорные, в основном, не изменились. Заднеязычные согласные *q*, *q̣*, *p*, как правило, перед гласными *\xi*, *р*, *ш̣*, *ш̄*, *ш̃* палатализировались. В звучащей речи на границах слов замечается озвончение, оглушение, упрощение, переход свистящих в шипящие.